ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/100 «08» 02 2023թ.

Ձեր

<<Հայփոստ>> ՓԲ ընկերության
գլխավոր գործադիր տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար
Ա. Աբրահամյանին

# ՀՐԱՎԵՐ

## ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ՁԵՎՈՎ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել փոստային ծառայություններ:

Առաջարկում եմ ձեզ մատուցել վերոնշյալ ծառայությունները:

Գնումները ֆինանսավորվելու է 2023 թվականի ՀՀ ոստիկանության, ճանապարհային ոստիկանության, անձնագրերի և վիզաների վարչության և պետական պահպանության գլխավոր վարչութան բյուջեներով նախատեսված միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«Հայփոստ» ՓԲԸ-ն** ունի .

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը և հայտը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ